ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Համշուլղացի Պ. Կարապետ Քեալաշեանց ձեռամբ Տէր Աւետիքեան Գրիգոր քահանայի նուիրելով յօգուտ Ճեմարանի 10 րուբլի՝ խոստացել է նոյնպիսի գումար նուիրել իւրաքանչիւր տարի:

Աստուած ի հաճոյս ընդունելով Պարոնի սրտագին նուէրը բիւրապատիկ բարեօք վարձատրէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ:

—

Տփխիսու Ներսիսեան Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը ի 5ն Մարտի № 128 գրութեամբ հաղորդում է որ Թիֆլիզի քաղաքացի Գրիգոր Շիօշեանց վախճանելիս՝ բերանացի աւանդած լինելով իւր սեպհականութիւնից 5000 րուբլի յատկացնել Ներսիսեան Հոգևոր դպրոցին, տոկոսիքով իւր անուամբ մի որդեգիր պահելու, այս գումարը յիշեալ դպրոցի Հոգաբարձութիւնը հանգուցեալ Գրիգոր Շիօշեանցի ամուսին Տիկին Կէկելից ստացած լինելով խնդրում է հրատարակել ի գիտութիւն Հայ հասարակութեան, և ի սրտագին շնորհակալութիւն առ բարեպաշտ Տիկինն:

Խմբագրութիւնս հրատարակելով այս՝ բարեմաղթում է առ Աստուած ի լոյս երեսաց իւրոց հանգուցանել հանգուցեալ Գրիգոր Շիօշեանցի հոգին և Ս. Հոգւով մխիթարել հանգուցելոյ այրի Տիկնոջ և միւս ազգականների ու բարեկամների սիրտը:

—

Մոսկվայից գրում են.

«Մոսկուա՝ բազմաթիւ յարգողք մեր ականաւոր հայերէնագէտ ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ, որ ընտիր գրուածներով ճոխացուցել է գրականութիւնը, որպէս և երկար ժամանակ և արդիւնաշատ աշխատել է մանկավարժական ասպարիզում —մտադիր են հասարակական համակրանք ցուցանել Նորան և՝ ի պատիւ Նորա ՅԻՍՆԱՄԵԱՅ արգասաւոր գործունէութեան մեծարել Նորան հանդիսապէս:

«Հանդիսին կարգադրչաց խումբը պարտ համարի անձին . . . Հայր, ծանուցանել Ձեզ այս մասին, յայտնելով միանգամայն, թէ հանդէսը լինելու է /10 Ապրիլի 1886 թ. Լազարեան Ճեմարանը՝ այսպիսի եղանակաւ. մատուցումն ուղերձաց անձնական շնորհաւորութիւնք, ընթերցումն ողջունական թղթոց, հեռագրաց և այլն:

«Ամենայն գրաւոր հաղորդակցութիւնք խնդրեն ուղարկել Լազարեան Ճեմարանի վերատեսուչ պ. Գէորգ Քանանեանցի հասցէիւ»:

—Մեծապատիւ Պ. Մկրտիչ Էմին է մին Լազարեան Ճեմարանի երկարատև և արդիւնաւոր վաստակաւորներից: Նա ուսուցչութեամբ և ուսուցչապետութեամբ իւր յիշատակը իւր բազմաթիւ աշակերտների մէջ յաւերժացնելուց զատ իբրև ներհուն հայագէտ ի լոյս ածելով նախնեաց պատուական երկերից մի քանիսը և գիտնական ծանօթութեամբք լուսաբանելով իւր հրատա-

բակութիւնները՝ յարգելի և պատուական ընծայած է իւր անձը։ Հայագէտ գիտնականը ազգիս բարոյն համար մի մեծ և անգնահատելի ծառայութիւն ևս է մատուցել՝ մեր պատմական գրքերից յատկապէս Մովսէս Խորենացին և հոգևոր մատեաններից՝ Շարականը թարգմանելով ռուսերէն որով՝ միջոց է տուել լուսաւորեալ աշխարհին ծանօթ լինելու մեր ազգաբանութեանը և եկեղեցու ոգւոյն։

—

Շնորհակալութեամբ ստացանք Վենետկոյ Մխիթարեան հայ կաթոլիկ ուխտի «Բազմավէպ» պարբերական հրատարակութեան Հոկտեմբեր Նոյեմբեր և Դեկտեմբեր եռամսեակը՝ որ ամբողջապէս նուիրած է բազմարդիւն Հ. Գևոնդ վարդապետ Ալիշանի «Սիսուան» նոր հրատարակութեանը։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Ճաշակ ոսկեղէն դարու» ամսաթերթի ա. և բ. համարները։

Այս ամսատետրակը հրատարակվում է Կ. Պոլսում՝ ընդ խնամով Յ. Գուրգէն և Ա. Մ. Գարագաշեան էֆէնտիների։

Հրատարակիչների նպատակն է գրաբար լեզուով հրատարակելով իրանց թերթը՝ ազգիս հին բարբառը յեղյեղել և մի և նոյն ժամանակ նոր աշխարհաբառը կանոնաւորելու մի նպատակ ընձեռել։

«Ճաշակ ոսկեղէն դարու» ամսատետրը իւր՝ մանուկներին մատչելի յօդուածներով և սահուն ու գիւրիմաց ոճով կարող է պիտոյանալ դպրոցական մանկանց՝ հրապոյր դառնալով դէպի ոսկեղէն դարու դպրութիւնը։

Յաջողութիւն ենք ցանկանում հրատարակիչներին։

Թերթի բաժանորդագինը գաւառներում՝ 31 դահեկան է.

Հասցէն. Կ. Պոլիս Զաքմաճըլար Յ. Գավաֆեան դրավաճառանոց, առ խնամակալս որը են Յ. Գուրգէն և Ա. Մ. Գարագաշեան։

—

Մեր ընթերցողաց ուշադրութիւնը հրաւիրումենք ամսատետրակիս մէջ «Հրաւէր Հայ ազգին» յօդուածի վերայ, ուր նկարագրուած են Աբ. Ա-թոռոյս շինութիւնները՝ թէ որպիսի դրութեան մէջ են, և «Արձագանք» պատուական շաբաթաթերթի Մեծ. Պ. Խմբագիրը ո՛րպիսի դրութեան մէջ գտել է դեռ 1884 թուին։

—

Շնորհակալութեամբ ստացանք Պ. Բարսեղ Քամալեանի փոխադրած «Երեք քաջեր» կոմեդիա մի արարուածով գրքոյկը։ Հեղինակութիւն հանդուցեալ Մ. Պէշիկթաշլեանի։

Գրքոյկը տպուած է Թիֆլիզ Յովհաննէս Մարտիրոսեանի Տպարանում 1885 ամի գինն է 20 կոպէկ։

—

Լրագիրներում կարդումենք որ ի նպաստ Երուսաղէմայ Հայոց վանաց՝ Շէյխ Իւլ Իսլամի բարձ. դատարանում վճռուել է այն բազմամեայ դատը, որ վարումէր ոմն Կարկուռ էֆէնդի ընդդէմ Երուսաղէմայ Ս Յակոբեանց վանաց՝ չինովի թղթերով տիրել ձգտելով նոյն վանքի սեպհականութիւնը եղող մի գետին՝ որ աւելի քան 200 000 րուբլի արժէ. Այս դատի այսպէս վճռուելուն համար Ամեն. Յարութիւն սրբազան պատրիարք եւս աշխատած է.

Աստուածային նախախնամութեան մի շնորհ է որ այս ժամանակս Կ. Պոլսոյ պատրիարքական Աթոռի վերայ բազմած է Ամեն. Յարութիւն Սրբազան Արքեպիսկոպոս, որ իւր բազմամեայ փորձառութեամբ՝ շատ սուր բնաւորութիւն ստացած ազգային կենսական խնդիրներ անյողդողդ տոկունութեամբ յառաջ վարելով՝ շատ տարաձայնութեանց առաջքը առաւ. եւ բարւոք յարաբերութեամբ առ Բարձրագոյն Դուռը՝ Կ. Պոլիս տարուած առաջնորդներին իրանց թեմերն ուղարկեց.

Նորին Ամենապատուութիւնը ընտրուած լինելով Երուսաղէմայ պատրիարք՝ հաստատուն յոյս ենք տածում թէ իբրեւ նոր Չղթայակիր Գրիգոր, ոչ միայն Երուսաղէմի ծանր պարտքը կը յաջողի վճարել, այլ իմաստուն տնտեսութեամբ՝ Երուսաղէմի աթոռը ազգի պատուոյն վայել դրութեան կը վերածէ նիւթական եւ բարոյական հարստութեամբ.

—

Լրագրներում ցաւօք սրտի կարդումենք թէ Սեբաստացի մօտ 40 ընտանիք կաթոլիկութեան են դիմել. կաթոլիկական շարժում կայ նաեւ Չարսանճակի մէջ.

Այս ցաւալի լուրը բնական է որ առած պիտի լինի նաեւ Կ. Պոլսոյ պատրիարքարանը, եւ որ առաջ պիտի ջանայ տնօրինել ինչ որ հարկաւորն է. Աշխարհաւեր կաթոլիկութիւնը մօտ 800 տարի է յուզումէ հայ ժողովրդեան խաղաղութիւնը.

—

Վեհափառ Հայրապետը Վաղարշապատի ժողովուրդը այս մեծի պահոց մէջ հոգեւորապէս մխիթարելու համար հաճեցաւ հրամայել որ Մայր Տաճարում կիւրակէ երեկոյեանները քարոզեն Գեր. Տեարք՝ Մեսրոպ եւ Երեմիա Եպիսկոպոսունք եւ Արժ. Հարք՝ Արիստակէս, Մամբրէ եւ Եղիա Վարդապետք, իւրաքանչիւրը մի մի օր. իսկ գիւղի եկեղեցում՝ կիւրակէ առաւօտները՝ Արժ. Յուսիկ Վարդապետ.

Քարոզը, մանաւանդ զգուշաւոր նախահոգութեամբ խօսեցուած քարոզը՝ բարոյական մեծ ազդեցութիւն ունի ժողովրդեան վերայ.

—

«Նոր—Դարը» Կ. Պոլսոյ «Հայրենիք» լրագրից արտատպել է հետեւալը.

Գոհութեամբ կըլսեմք թէ՝ Վսեմ. Ասպետ Ցունդ Աստուածատուր՝

անզաւակ լինելուն համար իւր ունեցած հարստութիւնը ազգին մանկուցն կրթութեանց ծառայեցնելու համար՝ յատուկ կտակ մը պատրաստեր է, կտակակատար կարգելով յետ մահուան իւրոյ Ս. Երուսաղէմայ Միաբանութիւնը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

(Ի ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍՈՑ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ)

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

—

25. Փետր. Սինոդը շրջաբերականով առաջադրեց բոլոր վիճակաւոր առաջնորդներին, Կոնսիստորներին, Ցաջորդներին և Հոգևոր կառավարութեանց ըստ նախնեաւանդ սովորութեան յանուն Ս. Միւռոնի օրհնութեան նուիրատուութեան համար ժապաւիներ տալ գործակալներին, ժողովրդեան սրտաբուղխ կամաւոր նուէրները օրինաւոր կարգաւ արձանագրելու և նուիրանաց հետ Սինոդին առաջարկելու համար։

—

25. Փետր. Սինոդը գոհութեամբ ընդունելով Ղզլարեցի պ. Գէորգ Սայեադեանի այս տարուայ 10 բուրլի նուէրը յանուն Ճեմարանի, առաջադրեց գանձապահին գրել մուտք Ճեմարանի նուիրատուութեանց մատեանում և ապահովագիր ուղարկել նուիրատուին Աստրախանայ Յովսէփ աւագ քահանայ Բունիաթեանի ձեռքով։

—

12 Փետ. Սինոդը ի նկատի ունելով Սինոդի անդամ Գեր. Յովակիմ Եպիսկոպոսի հրաժարականը, որով Նորին Սրբազնութիւնը խնդրում էր արձակել Նախիջևանու Կարմիր վանքի վանահայրութիւնից՝ վանահայր կարգեց Նախիջևանի Ս. Ստեփաննոս վանից միաբան Արժ. Յակոբ վարդապետ Տէր Աբրահամեանին։

—

5 Փետ. Սինոդը ըստ կոնդակի Վեհափառ կաթուղիկոսի, Արժ. Յուսիկ վարդապետ Մովսիսեանին (ըստ թախանձանաց իւրոց առ Վեհափառ Հայրապետն) արձակեց վանական կառավարութեան անդամութիւնից և Արժ. Յարգիս վարդապետ Տէր Գասպարեանին նշանակեց նախագահ և նախանդամ նոյն կառավարութեան։